Եւ արդ՝ երկնչիմ չեղել ի շաւղաց նոցա, դուցէ գթեցից ընթանալ ընդ անկոխ սոկքոյլթ·ա լնուլ զիղձն և կատարել զփառաւորութիւն յորդորական շարխս, զոր կանխաւ խոստացաք հիւսել հիւսաբանի՝ ներբողելով զապենիազն գովեստի: Եւ արդ՝ եթէ ունէի զիմաստութիւնն Սողոմոնի՝ և զարագութիւնն Դաւթի՝ և զհոգին Պաւղոսի՝ գուն ուրեք հետևէի արժանաւորութեանն: Թող թէ անհմուտ վարժից քերթողութեան՝ և դրականութեան, ընթադատութեանբ առոգանութեան՝ և արոհութեան: Բայց յուսալով յայն վասն որո բանս՝ և յայն որ տայն բան աւետարանչաց՝ ազդել յիմաստս մեր՝ և շարժել զկընդնդոցսգ մեր՝ ճառել փոքր ի շատէ զայնմանէ որ ճշմարտութեամբ ծոխացոյց զմեզ:

Արուսեակն իմանալի՝ աշխարհիս բանաւորիս, աստղն ճաճանչաւոր, առաւաւտն լուսածագ, արշաշուրշնդ մթնահալած, արփին հրափայլ՝ և աւդն առողջաշունչ, ամպ քաղցրացաւղ՝ և անձրև շահարար, աթոռ աննղին՝ և հանգիստ ոչ հանկչողին, արմատ անմահին

ա· Լուս· «ցաղուար»· Տես նախընթաց էջի ՏԸ դ·:

բ· Լուս· «ընտրող»·

գ· Լուս· «զլեզուս»:

դ· Ձեռ· արշաշուրշն·